

ԴԵՊՐ ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄԵԱԿ - 2

ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ
ԱՌԱԶԱՐԿՆԵՐ

- Բ -

ՖԻՆԱՆՍ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ՄՈՆՈՐԻՒԱԿ
1999

ՄՈՒՏՔ

Հայ Ազգային Վերակերտումի Առաջարկներու գծով կրնայ հարց ծագիլ թէ ինչո՞ւ ՖԻՆԱՆՍ-ը տասը կարևորագոյն սիւներէն մէկն է: Ինչո՞ւ մինչև այսօր ան նկատի չէր առնուած և յանկարծ այս կարևորութիւնը:

Դիմենք բնութեան օրինակին: Ինչո՞ւ Սահարայի անապատին մէջ բաւարար անձրև չի գար և կեանք համարեա գոյութիւն չունի: Որովհետև չկան գետեր ու լիճեր այդ անապատին մէջ. հետևաբար՝ չկայ գոլորշիացում, ուստի և չկան ամպեր ու անձրև:

Եթէ Հայաստանի ֆինանսական տարածքը նկատենք Սահարա մը, իսկ ջուրը նմանեցնենք դրամի և դրամի փոխարժէքներու աւազաններու, անմիջապէս պիտի նշմարենք թէ անձրևաբեր հատ ու կենտ ամպեր (Համաշխարհային Դրամատուն, Դրամական Միջազգային Հիմնադրամ, մարդասիրական օժանդակութիւններ) բաւարար չեն մնայուն կեանք ստեղծելու հոն:

Հայաստանի Հանրապետութեան Կեդրոնական Դրամատան նախագահ Բ. Ասատրեանին հետ հանդիպելէ և իր ստորագրած հաղորդագրութիւնները ընթերցելէ յետոյ կազմած ենք այն հաստատ համոզումը՝ թէ ան փայլուն ընդունակութեան տէր անձնատրութիւն մըն է և լաւ ըմբռնած է կեդրոնական դրամատան դերը՝ շնորհիւ իր մարզիչներուն (Համաշխարհային Դրամատուն, Դրամական Միջազգային Հիմնադրամ) խորհուրդներուն:

Բայց ներկայ հանգրուանին Կեդրոնական Դրամատան դերը կը սահմանափակուի Հայաստանի Հանրապետութեան վարկատուներ (creditors) ապահովելու և զանոնք գոհացնելու մէջ, փոխանակ իր ուշադրութիւնը հայ հասարակութիւնը ապահովելու և գոհացնելու վրայ կեդրոնացնելու: Տասնեակներով դրամատուներ սնանկացած են արդէն Հայաստանի Հանրապետութեան մէջ և կարևոր վնասներ հասցուցած իրենց ներդրումներուն (investors):

Քիչ մը ատելի վեր բարձրանալով, երբ նկատի առնենք Հայաստանի Հանրապետութեան բարձր պաշտօնատարներու կեցուածքը, անհաւանական չէ որ ականջալուր դառնանք «ի՛նչ հայ ազգային ֆինանս» բացականչութեան: Որովհետև ամէն ինչ որ ազգային է, թիրիմացաբար կ'ընկալուի ու կը ներկայացուի որպէս ֆաշիստական՝ խորհրդային շրջանէն բոյն դրած մտայնութեամբ մը: Իսկ մեր

«մտային բուսակություններ փայլող շինվածիկները» գրեթե բառացիորեն կ'որդեգրեն վերեն եկած ամեն գաղափար:

Մինչ այդ, ժողովուրդը կարիքն ունի,– հացի և ջրի նման,– ֆինանսի առաջաններու, որպէսզի գո'րծ ստեղծուի: ՀԱՅՈՑ ԲԵՐԳԻՆ կարիքն ունի ժողովուրդը:

Ֆինանսային առաջան մը՝ որուն հասցէն ըլլան Հայաստանի Հանրապետութիւնը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, և որ օրը քսանչորս ժամ շարունակ գործէ ու հսկէ որ Հայ Ազգային Վերակերտումի նշանակէտներէն մէկն ըլլայ հայոց հայրենիքին և հայ ժողովուրդին ֆինանսային ինքնաբաւութիւնը:

Այս կը նշանակէ ապահովել՝ միջոցներու միջոցը ՖԻՆԱՆՍՈՐ, ստեղծելու համար գործեր, որոնք, իրենց հերթին, պիտի ծառայեն կենսամակարդակի բարձրացումին:

Եթէ այսօր հարց տանք մենք մեզի՞ թէ հայ մը կարևորագոյն ի՞նչ արարք կրնայ գործել Հայաստանի Հանրապետութեան օգտակար դառնալու համար, անվարան պիտի պատասխանենք.– Հայաստանի մէջ ԳՈՐԾ ՍՏԵՂԾԵԼ:

Հոգ չէ թէ գործը ստեղծուի կրտորական (passive), միջանկեալ (intermediary) կամ ներգործական (active) կերպով:

Գործի ստեղծման կրտորական կերպ մըն է, օրինակ, վանք մը վերակառուցելը: Անմիջական հետևանքը կ'ըլլայ մինչև շինութեան աւարտը վարպետներ աշխատցնել, իսկ հետահաս հետևանքը կ'ըլլայ զբօսաշրջիկներ հրապուրել:

Միջանկեալ է, օրինակ, օրական ջերմուկի շիշ մը սպառելը կամ հայկական ոգելից խմիչք մը գնելը:

Ներգործական է մնայուն ֆինանսական կապ հաստատելը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւններուն հետ՝ առնել–տալու, տալ–պահանջելու, նոր–անսովոր–գործնական գործեր ստեղծելու նպատակով:

Նոր–անսովոր–գործնական գաղափարներ պարտին խարսխը–իլ հայ ժողովուրդի կրթական մակարդակին և Հայաստանի ու Արցախի աշխարհագրական դիրքերուն վրայ:

Հայկական Սփիւռքը օգտակար կրնայ ըլլայ փոխադրական ծախսերը (transportation costs) նուազագոյնի իջեցնող և շահութաբերութիւնը (return of investment) առաւելագոյնի բարձրացնող հետևեալ մարզերուն մէջ՝ համաշխարհային չափանիշով որակաւոր նոր գործեր ստեղծելու առումով.–

- 1– Ապահովագրագէտ–actuarian/դրամավար–money manager կեանքի եկամուտի/թոշակի առողջապահութեան արկածներու

- 2- Միջազգային ֆինանսի գօտի
դրամատնային
աւանդային (trust)
թոշակային
սակարանային (stock market)
Համահայկական (Pan-Armenian Bond Issues)
- 3- Առողջապահություն
հիւանդանոցային
յետ-հիւանդանոցային
դեղ օրայք
- 4- Զբօսաշրջություն
հայ
ոչ-հայ
պանդոկային/փոխադրական
- 5- Կրթական

Այս վերջինին մակարդակը թէև յուսահատական է, բայց ճիշդ հո՛ւս է որ մեզի առիթներ կը ներկայանան լումայ մը ներմուծելու: Ինչպէս օտարներ կ'ըսեն՝ **opportunity in adversity**:

Վերը նշուած հինգ մարզերը, իրենց հերթին, գործեր կը ստեղծեն համակարգիչներու և շուկայադրումի (marketing) մարզերուն մէջ: Հարկ է նկատի ունենալ որ հարուստ երկիրներու արտադրութեան 60 տոկոսը սպասարկութիւններու (services) մարզէն կը բող-խի, մինչ Հայաստան համարեա զուրկ է նման արտադրութենէ:

Մեր պահանջքը յետ-արդիւնաբերական (post-industrial) սպասարկութիւններու մարզը զօրացնելն է Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի հանրապետութիւններուն մէջ:

Յարակցաբար, պարտինք հասնիլ հո՛ւն, ուր իւրաքանչիւր հայ անհատ, այր թէ կին, ունենայ դրամատնային հաշիւ: Այս ինքնի՛ն նոր-անսովոր-գործնական ըլլալ կը նշանակէ նաև ա՛յս մարզին մէջ, հաւանականութեամբը ընկերային բարերար յեղաշրջումի մը:

Եթէ կ'ուզենք հասնիլ ազգային ֆինասական ինքնաբաւութեան՝ հարկ է որ քով-քովի բերենք մեր ֆինանսները և կարող դրամավարներու գործ տրամադրելով բոլորս ալ օգտուինք:

Ինքնաբաւութեան ձգտող Հայ Ազգային Ֆինանսական քաղաքականութեամբ և Հայաստանի ու Լեոնային Ղարաբաղի ապահովութիւնը իրենց ուշադրութեան առանցքը դարձուցած պետական կառոյցներով քսան տարիէն նոր Զուիցերիա մը կը ստեղծուի Կովկասի մէջ՝ Եթէ ԲՈՒՈՐՄ ՀԱՄԱԶԱՅՆԱԲԱՐ ԱՇԽԱՏԻՆՔ:

ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ